



ԵԼԵԿՏՐՍԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԹԱՇԽԱՐՀԱՀԱՆԳԻՍՒՆ

Բ Ա Ր Ի Ձ Ո Ւ



ԱՐԻՁՈՒ մասնաւոր թղթակցէ մը կը քայկնք հետեւեալ մանրամասնութիւնքն՝ ելեկտրականութեան ցարդ ըրած յառաջադիմութեանց վրայ, 'ի վաճառականութեան և 'ի տնտեսական դիտութիւնս:

« Առաջին նամակիս խոստացայ մանրամասն գրել ձեզ ելեկտրականութեան վերաբերմամբ, զայն ծնանելու կամ՝ աճեցնելու համար 'ի գործ գրուած այլ և այլ եղանակաց և գործեաց, և նորա զանազան կերպ գործածութեանց վրայ: Յետ պարզ կերպով գրելու լուսաւորութեան համար գործածուած զանազան ելեկտրական կերպերն՝ այժմ կը մնայ ինձ լսել թէ սոյն այս ելեկտրականութիւնն գործածուած տեսայ նաև յապահովութիւն երկաթուղեաց, բնակութեանց և հանքաց, 'ի զտուժն ալքոհի, գինիները հիւնցընելու, ալիւրը մսքրելու, քայտլինգները զբտելու, գոյները հաստատելու, ազնիւ մետաղները յղկելու համար: Վերջապէս գործածուած է 'ի փորագրութեան, յերաժշտութեան, 'ի ձայնագրութեան, 'ի համաժամանակութեան շարժման, 'ի բուսաբերութեան, 'ի վիրաբուժութեան, 'ի բժշկութեան, 'ի անական առողջաբանութեան, յօդերևութաբանութեան, յորում կը գործածուի յինքնագիծ նշանակութիւնս հողմոց, անձրևաց, ծանրաչափական ճնշմանց և օդոյ բարեխառնութեան, և հուսկ ուրիշն շարժման, զօրութիւն փոխանցելու. և եթէ ուզենք՝ կրնանք այս զօրութեամբ հակառակէից մեր ինքնագիծ ձայնական նամակն իսկ ուղարկել: »

Բայց յառաջ քան զամենայն կը հորցնենք թէ ինչ է արդեօք այս խորհրդաւոր գործողն և զբռնութիւնն՝ որ այսպիսի մեծամեծ սքանչելիք կը գործէ. այս ամէն ինչն և ոչինչն որ կը թափանցէ յանխառն եկեղեցի մինչ ՚ի հաստատուն մարմին, զոր չենք գիտեր թէ արդեօք պէտք է կոչել բնական երևութից ամէնէն ահաւորն՝ թէ ամենէն հեզն և գործադրականն։ Աշխարհիս ամենէն հուշակաւոր համալսարանի մը մէջ՝ երբ ուսանողք հարցուցին իրենց անուանի բնարանութեան ուսուցչին թէ ինչ է ելեկտրականութիւնն, ուսուցիչը առանց վայրկեան մ'իսկ տատանելու՝ չեմ գիտեր պատասխանեց . . . :

Իրաւունք ունէր ուսուցիչը, վասն զի ցարդ տրուած մեկնութիւնք միմեանց հակասականք են և օր ըստ օրէ գտնուած նորանոր փորձերով և գիւտերով՝ ամէնքն ալ կը ջրուին։

Սակայն եթէ ցարդ չենք գիտեր դեռ ինչ է ելեկտրականութիւն, գիտենք զայն ծնանելու կամ անցնելու, պահպանելու, չափելու միջոցներն, և այս զօրութենէն յառաջ եկած զանազան արդիւնք մեզ ծանօթ են. անտեսագիտին և ճարտարագիտին համար աւելորդ է զրեթէ գիտնալ ոչս զօրութեան նախնական պատճառը, մինչ ինքն ամենայն գիւրութեամբ և օգտակարութեամբ կը վայելէ անծանօթ զօրութեան արգասիքն, այսինքն զօրութիւն, լոյս և ջերմութիւն՝ եթէ կարողայ զգալանն հպատակել իր կամայն և զանազան պիտոյից։ Արեւատաղէտն առանց պատճառը գիտնալու՝ կրնայ յառաջ բերել զելեկտրականութիւն կամ տարրաբաշխութեամբ բնագիտական զօրութեան և կամ մեքենականութեամբ։ Առաջնոյն կը վերաբերին բարդերը, իսկ երկրորդին՝ Տիկնաւծները։

Քիչ տարի առաջ՝ բարդերով յառաջ եկած ելեկտրականութիւնն չէր այնչափ անտեսական, սակայն այսօր այս կերպս ալեթէ ոչ զօրութեան նական ելեկտրականութեան չափ խնայողական՝ այլ շատ դիւրացած է։ Գնդապետն իւրնար օգապարկի զեկը զանելու համար կատարած անընդհատ և բազմաթիւ փորձերուն մէջ՝ գործածեց Արոնի և Մարկի միահեղուկ բարդերը. առաջինը ի թիւումս քրտաբարձական իսկ երկրորդը յերկբըրստ աւշակի։ Այս բարդերուն զարմանալի գործունէութեան պատճառաւ, օգայու ճանապարհորդը՝ յետ զանելու իր կատարեալ հաւասարակշռութիւնը՝ ամբողջ ժամեր կրցաւ ուղղել իր գունտը նաև ընդգէմ՝ հողմոց։

Բարդային ելեկտրականութիւնն ինչպէս ամենայն ղք գիտէ՝ ՚ի գործ կը գրուի մասնաւորապէս լուսաւորութեան համար. սակայն յաշխարհահանդէսն Բարիզու՝ ելեկտրականութեան սոյս արգասիքը յառաջ բերելու համար ՚ի ցոյց դրուած էին բազմաթիւ մեքենաներ, որք յառաջ կը բերեն զլոյս՝ մեքենական զօրութեան փոխանցելովը։ Որ և իցէ շարժիչ մեքենայ կրնայ ծառայել առանց խտրութեան, թէ շողին, թէ կազը, թէ հանային իւղերը, և թէ ջրաբաշխականը, մի-

այն թէ շարժիչը ունենայ միակերպութիւն շարժման և ապահովութիւն արգասեաց :

Յաշխարհահանդէան 'ի ցոյց դրուած շոգեշարժ մեքենայից մէջ՝ բաւական կը համարինք յետեւ միայն փիլոնի արագաշարժ գործիքը : Այս գրութեամբ շինուած գործեաց մէջ ամենէն նշանաւոր և դիտելի կէտն է իրենց վայրկեանական ճնկիչ որով քանի մը մանրերկրորդի մէջ գործողութեան համար կարևոր եղած ճնշումը կրնանք ստանալ, ինչպէս նաև Դանէրտոնի Դորքիլ շարժիչը, գոր թէ ջրաբաշխական գրութեան և թէ ճնշեալ օդոյ կրնանք վերածել. վերջապէս Փարսլնի շարժիչը որ վայրկեանի մէջ 10, 000 շրջան կ'ընէ. այս վերջին գրութեամբ կը լուսաւորեն Սուէզի անդրը՝ ոչ եթէ ընդ բովանդակ երկայնութեամբ անցքին, այլ այս գործիքներէն միշտ պատրաստ կը գտնուին անցքին սկիզբը, և ամէն շոգենաւ իր ծառայութեան համար կը վարձէ :

Այս գործիքներէն մին յաշխարհահանդիսին 100 Ամերիկ և 80 Վոյդի հոսանք մը կը. մատակարէր, և ամբողջ գործիքը միայն հինգ և կէս հազարադրամ կը կշռէր : Նմանապէս կազով և հանային իւղերով բազմաթիւ շարժիչներ 'ի ցոյց դրուած էին . Սէն գետին վրայ բազմաթիւ ինքնաշարժ փոքր նաւակներ կը սահին առանց ծովի և եռացման :

Շարժիչներու մեքենական զօրութիւնը փոխանցելու համար կը գործածուին զօրութենա-եյեկտրական և մագնիսա-եյեկտրական կոչուած մեքենայք, որոց ամէն տեսակը կը գտնուէր յաշխարհահանդիսին : Այս գրութիւնը անհամեմատ խնայողական է և դիւրին քան վրարդայինն, և բարդերը որչափ ալ կատարելագործուին ոչ երբէք պիտի օ նենան առաջնոյն գի. րութիւնը և խնայողութիւնը :

---

Ելեկտրացեալ գիւնիք. — Հռովմայեցի Մէկառնիի ուսուցիչն, Երկու տարուէ 'ի վեր է որ գրեթէ յիսուն տեսակ գինեաց ելեկտրացուց, և ամէնքն ընտիր ելք ունեցան. այս արուեստս արդի ժամանակիս մէջ մեծ յառաջագիմութիւն կ'ընէ :

Ելեկտրութեամբ գիւնիք խորժելի համ և քաղցրահոտութիւն կը ստանան. գրեթէ իսկոյն կը պոյծառանան և կը զտուին. և որ զարմանալին է՝ բնաւ չեն ապականիր և ծովային ճանապարհորդութեանց կը դիմանան :

Օր օրուան վրայ փորձերը կը շարունակուին, և մեծ յոյս կայ որ ապագային մէջ այս արուեստս աւելի ևս պիտի զարդանայ, և մշակութեան և վաճառականութեան մեծ շահու դուռ պիտի բլլայ :

Ծովային յոյս կիրառութիւնն հիշատակներն սպիտակացնելու. — Լէվէն, ծովային ջրոյ մէջէն ելեկտրական հոսանք մ'անցնելով, ըս.